ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ | РЕСПУБЛИКА АРЦАХ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | АППАРАТ МИНИСТЕРСТВА ОХРАНЫ ПРИРОДЫ И ПРИРОДНЫХ РЕСУРСОВ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ
ГОСУДАРСТВЕННАЯ ИНСПЕКЦИЯ ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР

(0479) 7-05-44
✉ ք.Ստեփանակերտ, փող. Ա.Առաքելյան 14-գ ☎ ✉ г. Степанакерт, ул. А.Аракелян 14-г

ՈՐՈՇՈՒՄ N 33

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Ստեփանակերտ «23» հուլիսի 2019 թ.

Ես՝ Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության պետի պաշտոնակատար Ռաֆիկ Վլյաթի Մաթևոսյանս, քննելով 2019թ. հուլիսի 22-ին ջրօգտագործման թույլտվության կանոնների խախտման փաստով «Նետրինո» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սուրեն Դավիթի Դոշոյանի նկատմամբ N 26 առ 08.07.2019թ. որոշմամբ հարուցված վարչական գործը, համաձայն նախարարի թիվ 10 Ա առ 07.02.2019թ. հրամանի և տեսչության պետի N 17 առ 07.06.2019թ. հանձնարարագրի կատարված ստուգումների արդյունքում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ իրականացված ստուգումների արդյունքներով կազմված N 24 առ 10.06.2019թ. ստուգման ակտ, ինչպես նաև այլ նյութերը.

Պարզեցի

«Նետրինո» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Դ.Դոշոյանը բացատրություն է տվել, որ նախարարության կողմից թիվ 1.5-5/267 առ 07.02.2019թ. և 1.5-5/1019 առ 13.05.2019թ. ուղարկված գրությունների պահանջները, որ «Սյունիք 4» ՓՀԷԿ-ի ջրառի կետերում ապահովել ջրաչափական դիտակետով, չի կարողացել տեղադրել տեխնիկական պատճառներից ելնելով ու հետագայում եթե հնարավորություններ ստեղծվեն այդ դեպքում հարցին լուծում կտրվի: Բացի դրանից, ընկերության կողմից նախարարությանը չի ներկայացրել ջրառի ծավալների հաշվառման համար բնապահպանական և բնօգտագործման վճարների վերաբերյալ հաշվետվություն:

Վերոնշյալ երկու դեպքերով ընկերության կողմից խախտվել է N ԲՌ-164 ջրօգտագործման թույլտվության 13-րդ կետի առաջին և երկրորդ ենթակետերի պահանջները, այսինքն՝ նրա արարքում առկա են «Վարչական Իրավախախտման վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի $63^2$-րդ հոդվածի 2-րդ մասի և $169^4$-րդ հոդվածի հատկանիշներ:

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի 35 րդ հոդվածի 2-րդ մասի և $63^2$-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Նետրինո» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Դ.Դոշոյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարով վարչական տուգանք:

Սույն որոշումն ստանալուց հետո, 15 օրվա ընթացքում խախտում թույլ տված անձը պարտավոր է նշված գումարը փոխանցել Արցախի Հանրապետության պետական բյուջե՝ խումբ 24, ենթախումբ 6 915005240618/52 հաշվարկային հաշվին:

2. Տուգանքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչություն՝ հետևյալ հասցեով՝ ք. Ստեփանակերտ Ա. Առաքելյանի 14-Գ:

3. ԱՀ Բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարին ներկայացնել միջնորդություն «Սյունիք 4» ՓՀԸԿ-ի ջրօգտագործման թույլտվության գործողության կասեցման վերաբերյալ՝ մինչև N ԲՌ-164 ջրօգտագործման թույլտվության 13-րդ կետի պահանջների ապահովումը:

Արցախի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 287 և 288 հոդվածների համաձայն, սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադաս մարմին(վերադաս պաշտոնատար անձին) կամ դատական կարգով՝ որոշումն ընդունելու օրվանից 10 օրվա ընթացքում:

Պետի պաշտոնակատար Ռ.Վ.Մաթևոսյան